Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ տարածքում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր, որը բաղկացած կլինի 5 (Ա,Բ,Գ,Դ,Ե) բազմահարկ բնակելի մասնաշենքից (նկուղով՝ 14 հարկ): Մասնաշենքերից յուրաքանչյուրի առաջին հարկում կտեղակայվեն հասարակական նշանակության տարածքներ (կրթական և մշակութային կենտրոններ, առևտրի, բժշկական ծառայությունների մատուցման կենտրոններ, սրճարան և այլն), մնացած հարկերը նախատեսված կլինեն որպես բնակելի հատված: Բակային հատվածում՝ հարավային մասում, նախատեսվում են հանգստի գոտիներ, երեխաների համար խաղահրապարակներ և ծառուղիներ: Ծրագրով նախատեսվում է նաև հարմարություններ ստեղծել տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար: Բակի կողմից կնախատեսվի ընդհանուր մուտք դեպի առևտրի կենտրոններ և հասարակական սպասարկման տարածքներ: Տարածքում նախատեսվում են նաև ցածրահարկ բնակելի կառույցներ /Զ/ և մարզական մասնաշենք՝ լողավազանով և ժամանցի դահլիճով /Է/, ինչպես նաև ենթակայան և կառույցները սպասարկող ճարտարագիտական ենթակառուցվածքներ, ստորգետնյա ավտոկայանատեղ:

Համալիրի տարածքի տրանսպորտային մոտեցումը կիրականացվի Լենինգրադյան փողոցից դեպի «Նոյ» թաղամաս տանող ճանապարհով:

Տեխնիկական ցուցանիշներ	Ընդհանուր մակերեսը կկազմի շուրջ 45 հազ. քմ, այդ թվում՝ բնակելի տարածքներ՝ 37864 քմ, հասարակական սպասարկման տարածքներ՝ 2626 քմ, «Է» մասնաշենք՝ 764 քմ, ավտոկանգառ՝ 3693 քմ:
Ծրագրի ժամկետներ	Շինարարության ժամկետը՝ 3-4 տարի:
Ծրագրի արժեքը	Շուրջ 18 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրումների հաշվին:
Ներկա իրավիճակ	Իրականացվում են հողային և հիմնային աշխատանքներ: